

սուրբ փափին ի ժողովն Ֆիաւրենցոյ, թուին 1439: Եւ հրամանաւ արքայան Գրիգորիոսի հնգեսասաներորդի սուրբ փափին, այլ եւս սուրբ ժողովոյն որ վասն հաստատութեան հաւասոյ եւն կարգեալ կազմեալ եղեւ: Թուին ՌՌԻԳ (= 1623)»:

Բրոբականտան տպել կուտայ նաեւ այս ոգիով ուրիշ գործեր:

Բայց անոնց մէջ մասնաւորապէս կ'արժէ շեշտել հատ մը որ ուղղակի Հայ եկեղեցին կը հարուածէր:

Էջմիածնայ Մելքիսեդեկ կաթողիկոսը Հռոմի Պօղոս Ե. պապին ուղղած էր հպատակութեան թուղթ մը որ «Փափն տուեւ պատմայ զրոյ եւ յուղարկեւ Է ի Լեհ, նոյնպէս յստեմայն տեղիս, թէ Հայք ի մեր հաւատն եւն եկեր»:

Ուրեմն ուղղակի Հայ եկեղեցիին դէմ բացուած էր պայքար մը, ուժգին թափով մը:

Հռոմ իր քարոզիչներու միջոցով որոնք ծանօթութիւններով ու գիտութիւններով զինուած էին և տպագրութեան պէս գերազանց միջոց մըն ալ տրամադրելի ունէին, կը սպառնար Հայ եկեղեցին իր սրբտէն, իր կեդրոնին մէջ զարնել:

Հայ եկեղեցին իրեն սպառնացող այս վտանգին դիմագրաւելու համար ո՛չ ունէր